

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«27» ապրիլ 2018թ.

No 1108 - Ա

ԲԵԼԱՌՈՒՍԻ «ԲՈՐԻՍՈՎՅԱՆ ԲՈՒԺՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ»
ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԼՈՊԵՐԱՄԻԴԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ, ԼՈՊԵՐԱՄԻԴ
(ԼՈՊԵՐԱՄԻԴԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ԴԵՂԱՊԱՏԻՃՆԵՐ, ՉՄԳ,
ԲԵՐՍԵՐՈՒՄ (20/2X10/» ԴԵՂԻ 4371217 ՍԵՐԻԱՅԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձևի համար: Կապերի քանակ:	40/8
Տվյալների ամսաթիվ:	02 Mai 2018
Պատճառագրային համար:	10.45
Ստորագրող:	
Եզրակերպ:	

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 24-ի N303-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, բժշկական նշանակության այլ արտադրանքի և կենսակտիվ սննդային հավելումների շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) կարգը, հետկանչի մասին ահազանգի ծանուցման և հետ կանչի իրականացման վերաբերյալ տեղեկատվության ձևերը հաստատելու մասին» կարգի 3-րդ կետը, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի ապրիլի 19-ի թիվ 0101060318 եզրակացությունը, համաձայն որի «Լոպերամիդի հիդրոքլորիդ, լոպերամիդ (լոպերամիդի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, Չմգ, բլիստերում (20/2x10/» դեղի 4371217 սերիայի (պիտանիության ժամկետ՝ 01.01.2021թ.) ներմուծման նպատակով նմուշների լաբորատորիային փորձաքննության ժամանակ հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետությունում հաստատված որակի սպեցիֆիկացիային անհամապատասխանություն «լուծելիություն» կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել Բելառուսի «Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան»
ԲԲ ընկերության «Լոպերամիդի հիդրոքլորիդ, լոպերամիդ (լոպերամիդի

Ստեբ. 02.05.18 Տ. Խոսե

հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 2մգ, բլիստերում (20/2x10/)) դեղի 4371217 սերիայի շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. «Ալտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և «Ալֆա-Ֆարմ իմպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) Ապահովել սույն հրամանի առաջին կետում նշված «Լուպերամիդի հիդրոքլորիդ, լուպերամիդ (լուպերամիդի հիդրոքլորիդ), դեղապատիճներ, 2մգ, բլիստերում (20/2x10/))» դեղի 4371217 սերիայի շրջանառության դադարեցումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում և հետ հավաքումը՝ այդ մասին տեղեկատվություն տրամադրելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը:

4. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ.Թոփչյանին՝

1) սահմանված կարգով ապահովել հետհավաքման գործընթացի համակարգումը և արդյունքների մասին տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարություն:

5. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի օրինակի հանձնումը սույն վարչական ակտի հասցեատերերին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

